

## Ժիլբերթ Մեշքանբարյանս

### ՍԵՖՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՍՏ «ԹԱԶՔԻՐԱԹ ԱԼ-ՄՈՒԼՈՒՔ»-Ի

**Սեֆյան Պարսկաստան, Թագքիրաթ ալ-մուլուք, պաշտոններ, ամիրներ, վալիներ,  
վարչական, համակարգ, ղըզըլբաշ**

Պարսկաստանի պատմության մեջ վարչական բաժանումների մասին պահպանված հնագույն հիշատակությունները վերաբերում են Աքեմենյան հարստության թագավորներից Դարեհի ժամանակաշրջանին: Համաձայն Հերոդոտի Աքեմենյան Պարսկաստանը բաժանվում էր քսան մահանգի: Հետագա դարաշրջանների ընթացքում քաղաքական և տնտեսական պահանջներից ելնելով՝ կատարվել են մի շարք բաժանումներ: Սեֆյան հարստության կազմավորումից հետո առաջանում է երկրի վարչական նոր բաժանումների հիմնախնդիրը: Սեֆյան իշխանավորները ձգտում են իրենց ղեկավարման և վարչական բաժանման հարցում ընդօրինակել Սասանյան ժամանակաշրջանից պահպանված ավանդույթներին և նրանց օրինակով կազմակերպել կառավարման գործընթացը: Երբ կարգավորվում ու հաստատուն են դառնում իշխանության հիմքերը, նրանք սկսում են վարել կենտրոնաձիգ քաղաքականություն՝ կրճատելով վալիների իրավունքները: Վիլայեթների վալիների իրավունքների կրճատումը և վարչական կառույցների կենտրոնաձիգ եղանակին անցնելը կատարվել են զուգահեռ:

Սեֆյան հարստության վարչական կառույցն ունեցել է զարգացման երեք շրջան: Առաջին շրջանն ընդգրկում է Շահ Իսմայիլի գահակալությունից մինչև Շահ Աբբաս Ա-ի գահակալության տարիները, երբ վարչական համակարգը գտնվում էր փոփոխությունների և կազմավորման փուլում, որի ընթացքում պետության պաշտոնյաների պարտականությունները հստակ որոշված չէին: Երկրորդ փուլը ներառում է Շահ Աբբաս Ա-ի գահակալության ամբողջ շրջանը, երբ վերջինս փոփոխության ենթարկելով երկրի վարչական կառույցը՝ նոր հիմքերի վրա դրեց այն: Երրորդը աստիճանական թուլացման և վերջնական անկման շրջանն է, որ սկսվում է Շահ Սաֆիի գահակալությունից ու ձգվում մինչև Սեֆյան հարստության անկումը<sup>1</sup>:

Առաջին շրջանում երկրի վարչական կառույցը առավելաբար ռազմական կողմնորոշում ուներ և գտնվում էր ղըզըլբաշական ռազմական ավագանու ձեռքում: Երկրորդ շրջանում Շահ Աբբաս Ա-ն ջախջախեց ղըզըլբաշներին՝ ուժեղացնելով երկրի կենտրոնական իշխանությունը և վարչական կառույցը, կատարեց աշխարհիկ և կրոնական ուժերի բաժանում, որով վարչական կառույցը ամբողջական տեսք ստացավ: Արքունիքում զինվորական ուժերի թուլացմանը զուգընթաց ուժեղացան վարչական կառույցները՝ կարճ ժամանակահատվածում վերածվելով բարդ կառույցի:

<sup>1</sup> Տե՛ս Rowen H., op. cit., p. 54:

Երրորդ շրջանում վերջնականապես տարանջատվեցին կրոնական և աշխարհիկ կառույցները: Կրոնական դասը, որ այլևս չէր գտնվում աշխարհիկ հսկողության ներքո, սկսեց ամրապնդել իր դիրքերը: Նրա դերը ավելի նկատելի դարձավ Սեֆյան երկու թույլ գահակալներ Շահ Սուլեյմանի և Շահ Սուլթան Զուսեյնի գահակալության օրոք, որոնք իշխեցին շուրջ քառասունվեց տարի <sup>1</sup>:

Սեֆյան հարստության ժամանակաշրջանում գոյություն ուներ արքունական բանիմացների խորհուրդ, որը զբաղվում և օգնում էր շահին երկրի գլխավոր խնդիրների քննարկման և որոշումների կայացման գործում: Երկրի առօրյա բազմաթիվ հարցերով զբաղվում էին նաև արքունական վեզիրները և դատարանների ղեկավարները:

Թեև սկզբնաղբյուրներում պետության վարչական կառույցների գործունեությանը և նրա ղեկավարման ընթացքին չափազանց հպանցիկ ակնարկ է կատարվել, այդուհանդերձ հենց նույն աղբյուրներից ելնելով՝ պարզվում է, որ վիլայեթների իշխանավորները կենտրոնական իշխանության կողմից կիրառվող վարչական կառույցի օրինակով են ղեկավարել իրենց շրջանները, այնպես որ վիլայեթների և երկրի կենտրոնական ապարատի մեջ գործող վարչական կառույցներում աշխատում էին միևնույն անվանումներով և հանգամանքներով պաշտոնյաներ:

Սեֆյան թագավորները ղեկավարման համար մշակել էին յուրահատուկ գործելաոճ, որը գործում էր երկրի ամբողջ տարածքում: Այդ ժամանակաշրջանի պետականավարման կառույցը լավագույնս ներկայացնող մեզ հասած արժեքավոր աղբյուրներից է «Թագքիրաթ-ալ-մուլուք» գիրքը:

Համաձայն պահպանված տեղեկությունների՝ գիրքը պատրաստվել է 1726 թվականին Աշրաֆ Աֆղանի հրամանով և գրի առնվել Սեֆյան Պարսկաստանի վարչական կառույցի ծալքերին լավատեղյակ պաշտոնյա Միրզա Սամիայի միջոցով:

Սեֆյան հարստության գահին տիրացած աֆղանների համար ևս խիստ անհրաժեշտ էր երկրի կառույցի ղեկավարման ու վարչական բաժանումների շուրջ ունենալ համապատասխան ուղեցույց և տեղեկություններ: Պարզվում է, որ նման պահանջից ելնելով էլ նաև գրի է առնվել «Թագքիրաթ ալ-մուլուք-ը»<sup>2</sup>:

«Թագքիրաթ ալ-մուլուք»-ի բովանդակությունը վերաբերում է Սեֆյան Պարսկաստանի վարչական կառուցվածքին, արքունական պաշտոններին, հասարակության բաժանումներին, արհեստներին: Գրքում բացատրվում են մարզերի հաքիմների պարտականությունները, խոսվում նրանց եկամուտների մասին, ուր նաև անդրադարձ է կատարվում երկրի զինվորական կառույցին:

Թեև «Թագքիրաթ ալ-մուլուք»-ը բաղկացած է հինգ գլխավոր բաժիններից, որոնք բաժանվել են 84 գլուխների և ունի վերջաբան, ուր խոսվում է պաշտոնավոր անձանց և նրանց ենթակաների աշխատանքի ու պատասխանատվության մանրամասների շուրջ, գիրքը տեղեկություններ է պարունակում շուրջ 112 զբաղմունքի և պաշտոնյաների աշխատավարձերի ու վճարումների ծավալի վերաբերյալ:

---

<sup>1</sup> Տե՛ս **Teschke B.**, op. cit., p. 233:

<sup>2</sup> Տե՛ս **Kissinger H.**, op. cit., p. 66:

«Թագքիրաթ ալ-մուլուք»-ի մեջ կիրառված գրական ոճը նման է ժամանակաշրջանի վարչական գրական ոճին: Տերմինների մեծ մասը քչերին է հասկանալի, իսկ կիրառված բառապաշարի համար հեղինակը անհրաժեշտություն չի զգում ընթերցողին բացատրություններ տալ, միայն նախադասության ոճից և ենթադրությամբ կարելի է ընկալել նյութի բովանդակությունը: Դա և որոշ պարզ բառերի մեջ թույլատրված տառասխալներ խոսում են հեղինակի անփութության մասին<sup>1</sup>:

«Թագքիրաթ ալ-մուլուք»-ի հիմնգերոդ գլխի վերջում հեղինակը հավելվածի երեք հոդվածներով անդրադառնում է ժամանակաշրջանի մավաջեբների<sup>2</sup> և ռոսումի<sup>3</sup>, ինչպես նաև պետական պաշտոնեաների, սահմանային ամիրների և վալիների աշխատավարձերին ու եկամուտներին: Այսպիսով, Թագքիրաթ ալ-մուլուք-ի հավելվածները կարելի է համարել Սեֆյան Պարսկաստանի տնտեսական գործընթացը լուսաբանող կարևոր աղբյուր:

Առավել ճշգրիտ պատկերացում կազմելու և գրքի բովանդակությանը ծանոթանալու համար ստորև ներկայացնում ենք «Թագքիրաթ ալ-մուլուք»-ում նշված, պաշտոնների անվանումները:

### Առաջին գլուխ

Բացատրություններ է պարունակում մուլաբաշիի և սպահանի արքունական դատարանի վերաբերյալ, որը բաղկացած է հինգ գլուխներից՝

Ա. Մուլաբաշիի (ملا باشی) (մուլաների գլխավոր)

Բ. Սեդարաթե խասե և ամմե (صدارت خاصه و عامه) (արքունական և հասարակության հոգևոր հարցերի կարգավորող)

Գ. Ղազիե դարուլսալթանե Էսֆահան (قاضی دارالسلطنه اصفهان) (Սպահանի գլխավոր դատավոր)

Դ. Շեյխուլիսլամե դարուլսալթանե Էսֆահան (شیخ الاسلام دارالسلطنه اصفهان) (Սպահանի արքունական շեյխուլիսլամը)

Ե. Ղազիե ասաբեր (قاضی عسکر) (ռազմական դատավոր)

### Երկրորդ գլուխ

Երկրորդ գլխում տեղեկություններ են պահպանվել գլխավոր մարզերի և նրանց ենթակա շրջանների մասին: Հաղորդվում է նաև մայրաքաղաքում հաստատված Ալիջահ տիտղոսը կրող տասնչորս գլխավոր էմիրների մասին, որոնք անդամակցում էին արքայական խորհրդին: Այս գլուխը բաղկացած է մեկ նախաբանից և տասնչորս ենթագլուխներից:

<sup>1</sup> 1707 թ. Անգլիայի և Շոտլանդիայի միջև միության պայմանագրով (Treaty of Union) ձևավորվում է Մեծ Բրիտանիայի թագավորությունը:

<sup>2</sup> Տես **Teschke B.**, op. cit., p. 259:

<sup>3</sup> Զաքսոն փիթեր/Լաքհարթ Լորանս, Թարիխե Իրան Բամբրիջ (ջելդե շեշում, դեսմաթե դովում վա սեվում) դորեհ Սաֆավի, թարջումե Թեյմուրե Ղադերի, Թեհրան, 1387/2008, էջ. 218: (Պարսկերեն լեզվով) مینورسکی ولادیمیر ، سازمان اداری حکومت صفوی (یا تعلیقات مینورسکی بر تذکره الملوك)، تهران ۱۳۷۸/۱۹۹۹، p.218 1387/2008

Էմիրների պաշտոնների մանրամասնությունների մասին խոսելիս պիտի նշել, որ երկու կարգի կամ Նոր-ի էր բաժանվում՝

Առաջին Նոր- Օմարայե դեյրե դուլաթխանն<sup>1</sup> (امراء غير دولتخانه), որոնք բաժանվում են չորս մասի.

Վելաթ(ولات) (վիլայեթներ)

Բեյզաբեյզիան (بيگلر بيگيان) (բեգլաբեգություններ)

Խավանին (خوانين) (խանություններ)

Սալաթին(سلاطين) (սուլթանություններ)

Երկրորդ Նոր- Օմարայե դուլաթխանն (امراء دولتخانه) (սահմանային էմիրներ)

1. Վեզարաթե ազամ (وزارت اعظم) (գլխավոր վեզիր)

2. Ղուրչի բաշի (قورچی باشی) (ղուրչիների գլխավոր)

3. Ղուլլար<sup>2</sup> աղասի (قوللر آقاسی) (ծառանների գլխավոր)

4. Իշիք աղասի բաշի (ایشیک آقاسی باشی) (արքունական արարողապետ)

5. Ալիջահ թոֆանգչի բաշի (عالیجاه تفرنگچی آقاسی) (գլխավոր զինապետ)

6. Ալիջահ նազեր բոյութաթ (عالیجاه ناظر بیوتات) (արքունական արիեստանոցների գլխավոր)

7. Ալիջահ մողարաթ ալ խաղան դիվան բեյզի (عالیجاه مقرب الخاقان دیوان بیگی) (դատաբանի գլխավոր)

8. Ալիջահ ամիր շեքար բաշի (عالیجاه امیر شکار باشی) (որսի գլխավոր)

9. Ալիջահ թուփչի բաշի (عالیجاه توچی باشی) (հրետանու գլխավոր)

10. Ալիջահ ամիր ախոր բաշի ջելո (عالیجاه امیر آخورباشی جلو) (արքունական ախորապետ)

11. Ալիջահ Ամիր ախոր բաշի սահրա (عالیجاه امیر آخورباشی صحرا) (քաղաքից դուրս գտնվող ախորների արքունական ախորապետ)

12. Ալիջահ մողարաթ ալ խաղան, մաջլես նեվիս (عالیجاه مقرب الخاقان، مجلس نویس) (արքունական քարտուղար)

13. Ալիջահ մոսթուֆի ալ մամալեթ (عالیجاه مستوفی الممالک) (հարկային նախարար)

14. Ալիջահ խալիֆաթ ալ խուլաֆա (عالیجاه خلیفه الخلفاء)<sup>3</sup> (սուֆիների գլխավոր)

## Երրորդ գլուխ

Երրորդ գլուխը տեղեկություններ է պահպանել մոլդարաթ ալ-խաղան և մոլդարաթ ալ-հազրաթ պաշտոնների մասին, որոնք բաղկացած են երկու գլխավոր հոդվածներից: Այս մոլդարաթների պատասխանատվության հիմնական

<sup>1</sup> Սահմանային էմիրներ:

<sup>2</sup> Ղուլլար-բառացի նշանակում է ծառաներ, նրանք զինված էին բոլոր այն զենքերով, որ հատուկ էր դուրչիներին, սակայն Ղուլլար անվանում չէր նշանակում, որ այլ զինվորականների համեմատությամբ նրանց ազատությունը սահմանափակված էր: Շահ Աբբաս Ա-ն նրանց մեծ ուշադրության էր արժանացնում և նրանք շահի բանակում կատարում էին այն դերը, ինչ ենիչերիները օսմանյան բանակում:

<sup>3</sup> Միրզա Սամիա, «Թագքիրաթ ալ-մուլուք», Թեհրան, Ամիրքաբիր, 1368/1989, pp. 4&5: (Պարսկերեն [եզվով], امیرکبیر، تهران، تذکره الملوك، میرزا اسمیعا، تذکره الملوك، تهران، pp. 4&5, 1368/1989:

տարբերությունը այն է, որ մուղարաբ-ալ-խաղան-ը իր պաշտոնից ելնելով ավելի մոտ է կանգնած եղել շահին:

**Յոթերորդ Ա** – (مقرب الخاقان) Մուղարաբ ալ-խաղան, այս բաժինը բաղկացած է երկու նոր (نوع)-ից կամ հատվածից (տեսակից), որը ընդգրկում է բացատրություններ ներքինիների և ութ ոչ ռազմական պաշտոնների մասին:

Առաջին նոր (نوع اول) – խաջեսարայան (خواجه سرايان)

Երկրորդ նոր (نوع دوم) – (مقربانی که داخل خواجه سرايان نيستند) հարեմից դուրս գտնվող խաջեսարաներ

1. Մուղարաբ ալ խաղան հաքին բաշի (مقرب الخاقان حكيم باشی) (արքունական բժիշկ)

2. Մուղարաբ ալ խաղան մոնաջեն բաշի (مقرب الخاقان منجم باشی) (արքունական աստղագուշակ)

3. Մուղարաբ ալ խաղան մոհրալմամալեք (مقرب الخاقان معير الممالک) (թանկարժեք մետաղների որակի քննիչ)

4. Մուղարաբ ալ խաղան մոնշիալմամալեք (مقرب الخاقان منشی الممالک) (գլխավոր քարտուղար)

5. Մուղարաբ ալ խաղան մոհրդարե մոհրե Յոմայուն (مقرب الخاقان مهردادار مهر همايون) (արքունական կնիքի պատասխանատու)

6. Մուղարաբ ալ խաղան մոհրդարե մոհրե Շարաֆ մաֆազ (مقرب الخاقان مهردادار مهر شرف نفاذ) (արքունական պաշտոնավոր անձանց կնիքների պատասխանատու)

7. Մուղարաբ ալ խաղան դավաթդարե մոհրե անգոջթարե Աֆթաբ ասար (مقرب الخاقان دواتدار مهر انگشتر آفتاب اثر) (արքունական կնիքների թանաքի պատասխանատու)

8. Մուղարաբ ալ խաղան դավաթդար (مقرب الخاقان دواتدار) (կնիքների թանաքի պատասխանատու)

**Յոթերորդ Բ** – Մուղարաբ ալ-հազրաթ (مقرب الحضرت) , բաղկացած է երկու սենֆից:

Առաջին սենֆ (صنف اول) բաղկացած է չորս ենթազխից

1. Մուղարաբ ալ հազրաթ իշիքաղասիբաշի (مقرب الحضرت ايشيك آقاسی باشی) (արքունի արարողապետների գլխավորը)

2. Եսասավոլան Սոհբաթ (پساوولان صحبت) (պաշտոնական հանդիպումների արարողապետի օգնականներ)

3. Իշիքաղասիանե մաջլես (ايشيك آقاسيان مجلس) (ընդհանուր հանդիպումների արարողապետի օգնականներ)

4. Ղափուչիյան (قاپوچيان) (արքունական խոհանոցի պատասխանատուներ)

**Երկրորդ սենֆ** (صنف دوم)- Բաղկացած է երկու (ضابطه) զաբեթե-ից և տասնութե գլխից

**Առաջին զաբեթե** (ضابطه اول):

Սահեբջամե խազանե ամերե վա բոյութաթե մամուրե

(صاحب جمع خزانه عامره و ساير بيوتات معموره) (Արքունական արհեստանոցների հսկիչներ)

**Երկրորդ զարեթե (ضابطه دوم) :**

Սահեբջամե բոյութաթե մամուրե (صاحب جمعان بيوتات معموره) բաղկացած է տասնութ ենթազլխից:

1. Սահեբջամե խազանե ամերե (صاحب جمع خزانه عامره) (արքունի գանձարանի և բանալիների պատասխանատու)

2. Ջարախանե (جباخانه) (զինագործարանի պատասխանատու)

3. Մողարաբ ալ հազրաթ սահեբջամե դիչաջիխանե խասե (مقرب الحضرت صاحب جمع قيچاچيخانه خاصه) (արքունական կարանոցի դերձակների պատասխանատու)

Այս բաժինը բաղկացած է երկու (دفعه) դաֆե-ից.

Առաջին դաֆե (اول دفعه) – Դար զեբրե աջնասե թահվիլիե սահեբջամե մագբուր (در ذکر اجناس تحويليه صاحب جمع مذکور) (արքունական կարանոցին կտորների հանձնման պատասխանատու)

Երկրորդ դաֆե (دفعه دوم) – Դար զեբրե թավաբեյնե սահեբջամե մագբուր (در ذکر توابين صاحب جمع مذکور) (արքունական կարանոցի այլ բաժինների պատասխանատու)

4. Սահեբջամե դիչաջիխանե օմարայի (صاحب جمع قيچاچيخانه امرايي) (հասարակ հագուստների կարանոցի պատասխանատու)

5. Ֆարաչ բաշի վա մաշալդարբաշի (فراش باشی و مشعل دارباشی) (վրաններ պատրաստող և լուսարարների պատասխանատու)

Այս բաժինը բաղկացած է երկու (بابت) բաբաթ-ից

Առաջին բաբաթ (اول بابت) – Դար զեբրե թահվիլաթեու (او) (գուլքերի ստացման պատասխանատու)

Երկրորդ Բաբաթ (بابت دوم) – Դար զեբրե ջամաթի քե թաբե վա թաբեյնե ֆարաչբաշիան միբաշանդ (در ذکر جماعتی که تابع و تابين فراش باشيان ميباشند) (այն խմբի մասին որ ենթակա են պահեստների գլխավորին)

6. Սահեբջամե միվեխանե (صاحب جمع ميوه خانه) (արքունական մրգերի պահեստների պատասխանատու)

7. Սահեբջամե Ղանաթ (صاحب جمع غانات) (արքունիքին մսամթերքի պահեստների և մատակարարողների պատասխանատու)

8. Սահեբջամե արդարխանե (صاحب جمع آبدارخانه) (արքունական սպասքի պահեստների պատասխանատու)

9. Սահեբջամե շոթորխան (صاحب جمع شترخانه) (արքունական ուղտերի և նրանց վերաբերող գուլքերի պահեստի պատասխանատու)

10. Սահեբջամե դահվեխանե (صاحب جمع قهوه خانه) (արքունական սուրճի սպասքի պահեստների պատասխանատու)

11. Թահվիլե թահվիլդարանե էմարաթ (تحويل تحويلداران عمارات) (արքունական գորգերի և այլ փոխաձքների պահեստների պատասխանատու)

12. Սահեբջամե ռեքաբխանե (صاحب جمع ركابهخانه) (արքունական բաղնիքի և բաղնիքի պարագաների պահեստների պատասխանատու)

13. Սահեբջամն մաշալխանն և նաղարեխանն (صاحب جمع مشعلخانه و نقاره خانه) (արքունական լուսավորության և նվագարանների պահեստների պատասխանատու)

14. Սահեբջամն անբար (صاحب جمع انبار) (արքունական ամասունների կերերի և այլ պարագաների պահեստների պատասխանատու)

15. Սահեբջամն եստաբլ (صاحب جمع اصطبل) (արքունական ախոռների և կենդանիների խնամելու պատասխանատու)

16. Սահեբջամն շարբաթխանն (صاحب جمع شربتخانه) (արքունական թանկարժեք սպասքի և անուշեղենի պատասխանատու)

17. Ջարաբիբաշի (ضرابی باشی) (մետաղադրամների հատման և պատրաստման պատասխանատու)

18. Սարաֆ բաշի խազանն (صراف باشی خزانه) (արքունական գումարների գնձարան հանձնելու պատասխանատու)

### **Չորրորդ գլուխ**

Թագքիրաթ ալ-մուլուք-ի չորրորդ գլուխը վերաբերում է ֆինանսական աշխատանքային կազմին՝ քարտուղարներին, հաշվապահներին և այն պաշտոնյաներին, որոնք իրենց ղեկավարների միջոցով կապված էին շահին: Բաղկացած է երկու հոդվածից կամ մաղսադ-ից:

Առաջին մաղսադ (مقصد اول) – Վերաբերում է վազիրե բոյութաթ-ի և մոսթուֆի արբաբե թահվիլի պաշտոնին, որ երեք գլխից է բաղկացած:

1. Ալիհազրաթ վազիրե բոյութաթ (عالیحضرت وزیر بیوتات) (արքունական խնջույքների կազմակերպման պատասխանատու)

2. Մոսթուֆի արբաբե թահվիլ (مستوفی ارباب التحویل) (արքունական թանկարժեք կտորեղենի և մորթեղենի գրանցման և գանձարան հանձնման պատասխանատու)

3. Բոյութաթե մամուրե (بیوتات معموره) (արքունական արհեստանոցների պատասխանատու)

Երկրորդ Մաղսադ (مقصد دوم) – Վեզիրների, մոսթուֆիների, դաֆթարխանե հոմայուն, դարուղե և ազաբբաշիի մասին: Բաղկացած է քսան գլուխներից, սակայն գրքում նշվում է ընդամենը տասնութեց գլուխ:

Մողարաբալիհազրաթ նազերե դարուղե դաֆթարխանե (مقرب الحضرت ناظر داروغه دفترخانه) (արքունական գրասենյակների-դիվանների քարտուղարների պատասխանատու)

Դարուղե դաֆթարխանե (داروغه دفترخانه) (քարտուղարների պատասխանատու)

Վազիրե սարքարե դուրչիբաշի (وزیر سرکار قورچی باشی) (դուրչի բաշուն ենթակա քարտուղար)

Մոսթուֆիե սարքարե դուրչիան (مستوفی سرکار قورچیان) (դուրչի բաշուն ենթակա հաշվապահ)

Վազիրե սարքարե դուլաման (وزیر سرکار غلامان) (դուլամների գործերով զբաղվող քարտուղար)

Մոսթուֆիե սարքարե դուլաման (مستوفی سرکار غلامان) (դուլամների գործերով զբաղվող հաշվապահ)

Վազիրեթ բոֆանգչիան (وزیر تفنگچیان) (հրացանակիրների բաժնի քարտուղար)  
Մոսթուֆիե սարքարե մազբուր (مستوفی سرکار مزبور) (հրացանակիրների բաժնի հաշվապահ)

Վազիրեթ բուփխանե (وزیر توپخانه) (հրետանային բաժնի քարտուղար)  
Մոսթուֆիե սարքարե մազբուր (مستوفی سرکار مزبور) (հրետանային բաժնի հաշվապահ)

Լաշքար նեվիսե դիվանե ալա (لشکر نویس دیوان اعلی) (բանակի բաժնի քարտուղար)  
Սարխաթ նեվիսե դիվանե ալա (سرخط نویس دیوان اعلی) (բանակի եկամուտների արձանագրող քարտուղար)

Ջաբեթե նեվիս (ضابطه نویس) (արքունական եկամուտների գրանցման պատասխանատու)

14. Սահեթթոջիհե դիվանե ալա (صاحب توجیه دیوان اعلی) (շահի եկամուտների պահպանման և գրանցման գրասենյակի պատասխանատու)

15. Դաֆթարդարե դաֆթարխանե հոմայուն (دفتردار دفترخانه همایون) (արքունական հաշիվների տետրերի պահպանման պատասխանատու)

16. Ազաբբաշի (عزب باشی) (գրասենյակի նամակների առաքիչ)

17. Ջաբեթե դոշելք վաքիլ (ضابط دوشلک وکیل) (վաքիլե դիվանե ալլահին փոխարինող)

18. Ավարաջե նեվիսան (اوارجه نویسان) (հարկերի հավաքման և գրանցման պատասխանատու)

### **Յինգերորդ գլուխ**

Յինգերորդ գլխում ներկայացվում է տասնչորս գլխավոր գործակալների պարտականությունները: Յեղիմակը հիմնականում անդրադարձել է մայրաքաղաքի պաշտոններին, երկրի այլ քաղաքների մասին քիչ է խոսվում: Առավելապես ներկայացված է երկրի կենտրոնական իշխանության կառուցվածքը, և տրվում են համառոտ բացատրություններ մյուս քաղաքների մասին: Եղած բացերը հեղիմակը փորձում է լրացնել գրքի վերջում տրված հավելվածների միջոցով.

1. Վազիրեթ սարքարե ֆեյզե ասար (وزیر سرکار فیض آثار) (արքունական հողերի գործերը կարգավորող քարտուղար)
2. Մոսթուֆի մողուֆաթե մամալեթե մահրուսե (مستوفی موقوفات ممالک محروسه) (արքունական հողերի գործերը կարգավորող հաշվապահ)
3. Վազիրե դարուսալթանե էսֆահան (وزیر دارالسلطنه اصفهان) (Սպահանի խանութների եկամուտների հավաքման պատասխանատու)
4. Վազիրե սարքարե էնթեղալի (وزیر سرکار انتقالی) (հողագործական տարածքների գործերը կարգավորող քարտուղար)
5. Ալիհազրաթ մոսթուֆի սարքարե մազբուր (عالیحضرت مستوفی سرکار مزبور) (հողագործական տարածքների գործերը կարգավորող հաշվապահ)
6. Ալիհազրաթ քալանթար (عالیحضرت کلانتر) (գյուղապետներ ընտրող պատասխանատու)
7. Դարուլե էսֆահան (داروغه اصفهان) (Սպահանի ոստիկանապետ)

8. Ալիհազրաթ մոհթասար արձանալեք (عالیحضرت محتسب الممالک) (վաճառվելիք ապրանքների գները որոշող հաշվեքննիչ պատասխանատու)
9. Ալիհազրաթ մադիթ (عالیحضرت نقیب) (տուրքերի ցուցակ պատրաստող)
10. Միրաբե դարոլսալթանե Էսֆահան (میراب دارالسلطنه اصفهان) (Սպահանի ջրամատակարարման պատասխանատու)
11. Ալիհազրաթ մոսթուֆին սարքարե ֆեյզե ասար (عالیحضرت مستوفی سرکار فیض آثار) (վարձակալված հողերի և այգիների հաշիվների պատրաստման պատասխանատու)
12. Ալիհազրաթ մոսթուֆին Էսֆահան (عالیحضرت مستوفی اصفهان) (Սպահանի շրջակա գյուղացիներից գանձվող գումարների հաշիվների պատրաստման պատասխանատու)
13. Ռիայ դարոլսալթանե Էսֆահան (ریاع دارالسلطنه اصفهان) (Սպահանի և շրջակայքի հողագործների վնասի ճշտման պատասխանատու)
14. Մոթեսադի բաղաթ (متصدی باغات) (արքունական այգիների պատասխանատու)

### Չավելվածներ

Չինգերորդ գլխի ավարտից հետո գոյություն ունի Թագքիրաթ ալ-մուլուք-ի երեք գլուխներից բաղկացած հավելվածների բաժինը, որը հատկապես արժեքավոր է Սեֆյան Պարսկաստանի տնտեսության ուսումնասիրության դիտանկյունից:

Առաջին հավելվածը, ընդգրկում է տեղեկություններ ութսուն գլխավոր պաշտոնյաների աշխատավարձերի շուրջ:

Երկրորդ հավելվածը, կարևորվում է այն դիտանկյունից, որ պարունակում է վիլայեթների ղեկավարների, նրանց աշխատավարձերի և աշխատակիցների ցանկերը:

Երրորդ հավելվածը, պետական բյուջեի աղյուսակն է, որտեղ նախ նշվել են եկամուտները, ապա՝ ծախսերը, որոնք արժեքավոր են Պարսկաստանի պետության տնտեսության ուսումնասիրության դիտանկյունից<sup>1</sup>:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միրզա Սամիա, Թագքիրաթ ալ-մուլուք, Թեհրան, Ամիրքաբիր, 1368/1989, (պարսկերեն լեզվով) 1368/1989, میرزا سمیعا، تذکره الملوك، تهران، امیرکبیر،
2. Մինորսկի Վլադիմիր, Սազմանե էդարի հոքումաթե Սաֆավի(եա թալիղաթե Մինորսքի բար Թագքարաթ ալ-Մուլուք), Թեհրան, 1378/1999, (Պարսկերեն լեզվով) مینورسکی ولادیمیر ، سازمان اداری حکومت صفوی(یا تعلیقات مینورسکی بر تذکره الملوك)، تهران 1378 /1999,

<sup>1</sup> Մինորսկի Վլադիմիր, Սազմանե էդարի հոքումաթե Սաֆավի(եա թալիղաթե Մինորսքի բար Թագքարաթ ալ-Մուլուք), Թեհրան, pp. 14,15,16, 1378/1999 (պարսկերեն լեզվով) مینورسکی ولادیمیر ، سازمان اداری حکومت صفوی(یا تعلیقات مینورسکی بر تذکره الملوك)، تهران 1378/1999, pp. 14,15,16,.

3. Ջաքսոն փիթեր/Լափհարթ Լորանս, Թարիխե Իրան Քամբրիջ (ջելդե շեշուն, դեսմաթե դովուն վա սեվուն) դորեհ Սաֆավի, թարջունե Թեյմուրե Ղադերի, Թեհրան, 1387/ 2008, (Պարսկերեն լեզվով)  
،مینورسکی ولادیمیر ، سازمان اداری حکومت صفوی (یا تعلیقات مینورسکی بر تذکره الملوك) ، 1387/ 2008
4. Minorsky, V., ed. And trs, Tadhkirat al-Muluk, A Manual of Safavid Administration (circa 1137/1725) London, 1943.
5. Andrew J. Newman, Safavid Iran (Rebirth of a Persian Empire), 2009, London-New York.
6. David Blow, Shah Abbas (The Ruthless king who became an Iranian Legend), 2009, London-New York.
7. Encyclopaedia Iranica ix, «Europe, Persian Image of», pp. 70-76, 1998
8. Encyclopaedia Iranica x, «Georgians in Safavid Administration», pp. 493-96, 2001
9. Encyclopaedia Iranica, «Safavid Dynasty», (Web-based), 2005
10. Encyclopedia of Islam, «Shah `Abbas II», 3rd edn., pp. 2-5., 2008

**Ժիլբերթ Մեշքանբարյանս, Սեֆյան Պարսկաստանի պետականավարման համակարգը ըստ Թազքիրաթ ալ-մուլուքի** – Ձեռնարկը կազմվել է Սեֆյան հարստության անկման ու Պարսկաստանում աֆղանների տիրապետության ժամանակաշրջանում և հանդիսանում է կարևոր աղբյուր Պարսկաստանի վարչական համակարգի լուսաբանման համար: «Թազքիրաթ ալ-մուլուք»-ը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից և վերջաբանից: 1-ին գլուխը վերաբերում է մայրաքաղաք Սպահանի կրոնական բարձրաստիճան պաշտոնյաների աշխատանքին, 2-րդ գլուխը վիլայեթների գլխավոր պաշտոնյաների աշխատանքին, 3-րդ գլխում արքունիքին մոտ կանգնած մողարաբ կոչվող աշխատողների աշխատանքի բացատրությունն է, 4-րդ գլուխը վերաբերում է պաշտոնյաների ֆինանսական գործունեության, իսկ 5-րդ գլխում բացատրվում է մայրաքաղաքի և նրա հարակից շրջանների աշխատանքների կազմակերպմանը: Վերջաբանը բաղկացած է երեք հավելվածներից, որոնց մեջ մեկնաբանվում են վիլայեթների պաշտոնյաների եկամուտներն ու պետական ծախսերը: Թազքիրաթ ալ-մուլուք-ում նկարագրվում են Սեֆյան պետության գրեթե բոլոր պաշտոնյաների պարտականությունները և պատասխանատվությունները:

**Жилберт Мешканбарянс, Система госуправления Сефевидского Ирана на основании трактата Тазкират ал-Молук –**

, 5-

« », 4-

, 5-

3

« - »

**Jilbert Meshkanbarians, The administrative system of Persia at safavid era according to Tadkerat al-moluk – The** Persian manual comes from the transitional period between the collapse of the Safavid Empire and the early afghan period in Persia. It presents a pre-eminent source of the safavid administrative system. The manual consists of an introduction, five chapters, and conclusion. Chapter I deals with the responsibilities of the religious authorities at the capital city of Isfahan. Chapter II deals with provincial governors and major officials. Chapter III elaborates on the dignitaries with the rank of moqarrab or confidant. Chapter IV deals with the officials of the financial administration. Chapter V focuses on those dealing with the affairs of the capital city and its surrounding districts. The conclusion is actually an appendix in three parts dealing in great detail with the incomes of officials and with provincial revenues. Tadkerat al-moluk describes the responsibilities of the major and minor officials of the safavid state.

*ժիլբերտ Մեշքանբարյանս - Եղջ պատմության ֆակուլտետի Չայաստանի  
հարակից երկրների պատմության ամբիենի հայցորդ*

